Ղարաբաղ. խաղաղապահների բազա՞, թե՞ Հարավային Կովկասի բանալիներ

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 18.04.2024թ.

Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղից դուրս բերեց ՌԽԶ-ն՝ իր «խաղաղապահ զորակազմը»: Խոսքը երկու հազարանոց խմբավորման մասին է, որը զինված է հրազենով և թեթև զրահատեխնիկայով: Բացի այդ, կան դեռևս չհաստատված տեղեկություններ այն մասին, որ ՌԴ զինվորականների 500 հոգանոց զորակազմը կմնա Լեռնային Ղարաբաղում առնվազն մինչև 2025 թ. աշուն: Եթե տեղեկությունը հաստատվի, ապա պետք է ենթադրել, որ մնացած ստորաբաժանումը զուտ խորհրդանշական գործառույթ կիրականացնի՝ Մոսկվայի դեմքը «փրկելու» համար, որն անձամբ է հրաժարվել իր՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին պատրաստած համաձայնագրի արդյունքում ստանձնած պարտավորություններից:

Ինչ էլ որ լինի, նման որոշումը դժվար թե փոխի այդ հնչեղ իրադարձության էությունը, որը ոչ այլ ինչ է, քան Ռուսաստանի կողմից իր «*պատմական պատասխանատվության գոտու*» համակարգված հանձնման անշեղորեն իրականացվող հերթական քայլը:

ՌԴ կառավարության պաշտոնական ներկայացուցիչներն իրենց մեկնաբանություններում, ինչպես և սպասվում էր, խուսափում են ՌԽԶ-ի հեռանալը որպես Մոսկվայի՝ իր դիրքերից գլոբալ նահանջի տրամաբանության մեջ ներկայացնելուց և, առավել ևս, ոչ մի կերպ չեն շեշտում կատարվածի պատմական ենթատեքստը: Փորձագիտական շրջաններն այս կամ այն չափով ընդունում են Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական լայնածավալ ձախողման փաստը, սակայն փորձում են դա բացատրել Արևմտյան կոալիցիայի և տարածաշրջանային դերակատարների ճնշմամբ: Բայց ոչ մի դեպքում՝ ՌԴ արտաքին քաղաքականության իրականացման համար պատասխանատու ռուսաստանյան դիվանագիտության և այլ գերատեսչությունների սխալ հաշվարկներով:

Ընդհանուր առմամբ, ակնհայտորեն փորձ է արվում արդարացնել Մոսկվայի «ղարաբաղյան քաղաքականության» ձախողումը, որն արդյունքում վերածվել է 1991-ի տխրահռչակ «Օղակ» գործողության ավելի լայնամասշտաբ տարբերակի: Եվ դա արվում է կա՛մ սլաքներն ուղղելով դեպի «*արևմտյան դերակատարների հետ համաձայնության եկած Հայաստանի իշխանությունները*», կա՛մ հղումներ կատարելով հանուն Ուկրաինայում ինչ-որ ավելի մեծ բանի հասնելու և, ըստ էության, հենց Ռուսաստանի փրկության ու ապագայի՝ «*մի ռազմաբազա» զոհաբերելու գոյութենական անհրաժեշտությանը*: Մինչդեռ, ում, եթե ոչ այս ձևակերպման հեղինակ, ռուս հեղինակավոր արևելագետ պարոն Սատանովսկուն, հայտնի չէ, որ պատմական համատեքստում խոսքը ոչ թե «*մի ռազմաբազայի*» մասին է, այլ այն բանալիների, որոնք երեք դար առաջ հենց Ղարաբաղի իշխանները (մելիքները) և հոգևորականները հանձնել

էին ռուս ինքնակալներին և դրանով իսկ բացել Հարավային Կովկասի դռները նրանց առջև: Հենց այն «բանալիների», որոնք, Մոսկվան, անցնելով սրբազան խորհրդանիշների վրայով և անտեսելով իր՝ որպես «*Երրորդ Հռոմ*» լինելու պատմական առաքելության հայտարարումը, ըստ որի՝ նա կոչված է պաշտպանելու փոքր քրիստոնյա ազգերին, հանգիստ և առանց խղճի խայթի տալիս է նրանց, ովքեր պատրաստ են պայքարելու հանուն Հարավային Կովկասի:

Մնում է պարզել, թե «Ռուսաստանյան տերության» հարավկովկասյան ժառանգությունը ում գանձանակում կհայտնվի: Բրիտանական հովանավորության տակ գտնվող թուրք-իսրայելական «*ռազմաքաղաքական կոնսորցիումի՞*», թե՞ վերածնվող «*իրանական կայսերապաշտության*», որից ժամանակին՝ իր փլուզման պատճառով, խլվել էր տարածաշրջանը: Գուցե հենց Թեհրա՞նն էր՝ Ադրբեջանի տարածքում թեժ իրադարձությունների նախօրեին, խնդրել Մոսկվային հեռանալ՝ «*ոտպատակ չընկնելու համար*»: Կամ, գուցե, ամեն դեպքում, Մոսկվայի համար դեռևս արդիակա՞ն է «*եթե ոչ մեզ, ապա՝ ոչ ոքին*» մոտեցումը՝ հաշվի առնելով սպասվող արյունալի և կործանարար մրցակցությունը Հարավային Կովկասի հավակնորդների միջև: Իսկ հետո, ինչպես իրենք են ասում՝ ժամանա՞կը ցույց կտա:

Արդյո՞ք այս մասին է ակնարկում մեկ այլ, ոչ պակաս հեղինակավոր, ռուս քաղաքագետ-միջազգայնագետ Սերգեյ Մարկեդոնովը՝ տեղի ունեցածի համատեքստում պնդելով, թե. *«ցանկացած դուրսբերում դատավճիռ չէ, իսկ նահանջը ոչ միայն ռազմական գործերի, այլ նաև «մեծ աշխարհաքաղաքականության» մեջ միանգամայն օրինական ճանապարհ է*, և, որ *«ԼՂ-ից Ռուսաստանյան խաղաղապահ զորակազմի հեռանալը պատմության ավարտը չէ, եթե այդ մասին դատողություններ անել հանգիստ և բանականությամբ»:*

Մնում է միայն կռահել, թե պարոն Մարկեդոնովը ո՞ւմ է հորդորում՝ չհավատալ *«պատմության ավարտին» և դատողություններ անել «հանգիստ բանականությամբ». Ռուսաստանյան տերությա՞նը*, որը երբևէ կարող է վերադառնալ Հարավային Կովկաս, թե՞ հայ ժողովրդին, որին դեռ նոր մարտահրավերներ ու պայքար է սպասում:

Եվ, այնուհանդերձ, մնում է մի կարևոր հարց. լքելով ԼՂ-ն՝ արդյո՞ք Մոսկվան ձեռքերի ազատություն ստացավ Ադրբեջանի հետ հարաբերություններում: Արդյոք կկառուցի՞ որակապես նոր հարաբերություններ Երևանի հետ, թե՞ դեռ կշարունակի պնդել 2020–2022 թ. եռակողմ համաձայնագրերի, այդ թվում՝ այսպես կոչված, «*Զանգեզուրի միջանցքի*» կյանքի կոչման անհրաժեշտությունը: